

8408-30

ՏԱՐՈՒԱՆ ՀԱՅԸ ԱՐԵԼ ԱՂԱՆԲԵԿԵԱՆ



ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Հ. Բ.Լ.Մ.ի ցկեանս նախադաս է և ազգային մեծագոյն բարերար և առաջնորդող դէմք Ա. Մանուկեանի ընդհանուր վաստակը նոյնպէս կը կշռէ շատ ծանր՝ մեր ազգային նժարին վրայ: 1987 տարեշրջանին ան ալ կատարեց ուշադրաւ գործեր՝ բացի իր նախազահական ընդհանուր աշխատանքներէն և այլևս ընթացիկ դարձած բարերարութիւններէն: Մ. Նահանգներու պետական քարտուղար Ճորճ Շուլցին և քաղաքական այլ դէմքերու մօտ կատարած իր դիմումները նշանակալից էին մէկ աւելի տեսակէտներէ: Եւ սակայն, միշտ նկատի ունենալով 1987 տարեշրջանը, մենք ստիպուած եղանք նախընտրութիւնը տալ ուրիշին:

ՃՈՐՃ ՏԵՕՔՄԵՃԵԱՆ.— Մ. Նահանգներու մեծագոյն՝ Քալիֆորնիոյ նահանգի կառավարիչի պաշտօնին տիրակալը կարեւորագոյն դէմքերէն մէկը կը հանդիսանայ մեր ժողովուրդին: Անցնող տարեշրջանին ան կատարեց, բացի իր ընթացիկ գործերէն, հայանդաստ ճիղեր՝ տմերիկեան Քանկրէսէն ներս հայանդաստ բանաձևին ընդունման համար, անոր մերժումէն ետք հրապարակաւ և ազդու կերպով յայտնելով իր դժգոհութիւնը:

ԿԱՐՐԻ ԳԱՍՊԱՐՈՎ.— Որքան ալ տարօրինակ թուի ումանց, մենք այս հայ երիտասարդին անունը նոյնպէս առինք ընտրելիներու մեր ցուցակին վրայ, քանի որ 1987 տարեշրջանին, շարունակելով իր նախորդ տարիներու պայքարը, անօրինակ սխրագործութիւն մը կատարեց ան համաշխարհային թաղի համար մղուող պայքարին մէջ: Ոստքը չի վերաբերի միայն այն հողերանական և այլ կարգի ճնշումներուն, որոնց կուրծք տուաւ ան Անաթոլի Քարփովի դէմ մղած իր 124 մրցումներուն ընթացքին, նախ խլելով ակոյտանի թաղը և ապա պահպանելով զայն: Կարելոր և աւելի մեծ սխրագործութիւն մը կատարեց ան՝ վերջին մրցամարտին վերջին՝ 24րդ հանդիպման ժամանակ գործնականօրէն փաստերով, որ ճատրակը, իրրեւ զիտութիւն, արուեստ և սփոր, զարգացման անսպառ կարելիութիւններ ունի, հակառակ ոմանց պնդումներուն:

ԱՐԵԼ ԱՂԱՆԲԵԿԵԱՆ
«ԶԱՐԹՕՆՔ» 1987 տարեշրջանի համար Տարուան Հայը կը հոչակէ Պ. Միւլեթեան Կոմկուտի Կենտկոմի ընդհ. քարտուղար Միխայիլ Կորպաչովի խորհրդանշան՝ տնտեսագէտ այս հայը, մի քանի նկատառումներով:

ա) Ա. Աղանբեկեան իրաւամբ կը նկատուի «ուղեղը» կորպաչովեան տնտեսական և ընկերային բարեշրջական քաղաքականութեան:

բ) Այդ քաղաքականութիւնը, որուն մէջ էական դիրք կը զբաղեն Աղանբեկեանին տեսութիւնները, գործնական մեծ նշանակութիւն ունին Արեւելք - Արեւմուտք յարաբերութեանց մեղմացումին և փոխ - շահաւէտ տեքանքին համար:

Դժբախտաբար, մեր մէջ չըմաշխարհային կամ միջազգային կայ աւանդութիւնը Տարուան չափանիշով ազդեցութիւն դորՄարդը կամ՝ աւելի մեզայածել կամ յեղաշրջող ներգործուտուկ՝ Տարուան Հայը որոշելու: Թիւն ունենալ, ի շահ իր ժողովուրդին, իր երկրին ու համայն տու գործակալութեանց կաս մարդկութեան:

մեծ թերթերու հարցախոյզի ղեկութիւնը, ի վիճակի չենք շօշափելու ընթերցողներուն և ընտրեալ մասնապետներու կարծիք՝ որոշելու համար Տարուան մեր Մարդը: Բաց աստի ամէն հոսանք, ամէն համայնք և ամէն դադութ ու շրջանակ ունենալով իր՝ դժբախտաբար տեղայնական և ներքին նախընտրութիւնները, կը խուսափինք ձեռնարկելէ այդ դժուարին գործին, վախճալով որ մեր ընտրութիւնը կրնայ ընդունելի չըլլալ մեր ժողովուրդին մեծամասնութեան կողմէ:

Կայ նաեւ ուրիշ դժուարութիւն մը, այս անգամ՝ ոչ մեզայատուկ. Ի՞նչ սկզբունքներով պէտք է ընտրել թեկնածուները և անոնց մէջէն ջոկել արժանաւորագոյնը, անոնց ո՞ր յատկանիշները և ի՞նչպիսի իրազորումները նկատի առնել միջազգային, ներազգային քաղաքական, տնտեսական հոգեւոր, արուեստի, մշակոյթի, սփորի, թէ՛...:

Այո՛, իսկապէս դժուար է որոշելը, մանաւանդ առանց ընթերցողներու և ժողովրդային լայն խաւերու օգնութեան:

Այսուհանդերձ, չզիմանալով փորձութեան, և առաջնորդուելով «փորձը փորձանք չէ» սկզբունքէն, այս տարի առաջին անգամն ըլլալով կը կատարենք այդ փորձը, ընթերցողին ձգելով առարկելու ամբողջական իրաւունքը:

Սկզբունքը.— Այսպիսի ընտրութիւններու պարագային կիրարկուող զանազան սկզբունքներէն մենք նախընտրեցինք հետեւեալը. ընտրել, իրրեւ Տարուան Մարդը, ա՛յն հայը, որ ա՛նքան մարդի մէջ կը յաջողի անոր ընդհանուր վաստակը շատ տուեալ տարուան ընթացքին ազգային մակարդակէ վեր՝ հարթ թեկնածուներունը:

Մեզի կը թուի թէ ասկէ աւելի արդար ու պարկեշտ մտեցման եղանակ չէինք կրնար որդեգրել, միշտ նկատի ունենալով մեր ժողովուրդին ու մեր երկրին գերագոյն շահերը՝ միջազգային մակարդակի և համաշխարհային կշիռի չափանիշերով:

Թեկնածուները.— Մեկնելով այս սկզբունքէն, 1987 տարեշրջանին համար առանձնացուցինք ընտրելի թեկնածուներու հընգանդամ ցանկ մը, որ կը բաղկանայ հետեւեալ դէմքերէն.

Վագգէն Ա., Ամենայն Հայոց Կաթողիկոս. — Իրրեւ վաստակ և իրրեւ ազգային ու միջազգային չափանիշով անձնաւորութիւն՝ Ամենայն Հայոց Հայրապետը ամէնէն արժանի թեկնածուն է հայութեան թիւ 1 անձը կոչուելու: 1987 տարեշրջանին Նորին Սրբութեան գրած նամակները Եւրոխորհրդարանի նախազահին և Եկեղեցիներու Համաշխարհային Պորհուրդի քարտուղարին՝ ծանրակշիռ նշանակութիւն ունեցան Սթրազպուրկի 18 Յունիսի Որոշումին վրայ: Բաց աստի, անոր հանդիպումները նախազահ Ռոնըլտ Ռիկընի, ՄԱԿի ընդհ. քարտուղար Տը Քուէյարի և միջազգային քաղաքական թէ կրօնական այլ դէմքերու հետ՝ կարելոր ներգործութիւն ունեցան հայ ժողովուրդի գերագոյն շահերու տեսակէտէն: Սակայն, մեկնելով մեր իսկ որդեգրած սկզբունքէն, որ նկատի կ'առնէ անցնող մէկ տարուան ժամանակաշրջանը, Նորին Սրբութեան անունին դիմաց մենք մեծ դժուարութեամբ չկրցանք ղեկնել «Թիւ 1» նշանը, հոգ չէ թէ անոր ընդհանուր վաստակը շատ աւելի ծանր կը կշռէ՝ քան բար թեկնածուներունը:

ՏԱՐՈՒԱՆ ՀԱՅԸ՝ ԱՐԵԼ ԱՂԱՆԲԵԿԵԱՆ

Շար. Ա. Էջէն

դ) Այդ քաղաքականութիւնը մեծ նշանակութիւն սխիտի ունենայ մեր մայր հայրենիքին՝ Խ. Հայաստանին տնտեսական հրաշքի, ժողովուրդին բարօրութեան եւ ասպակեղրոնացեալ տնտեսութեան մը զարգացման համար, որ հետզհետէ սխիտի յառաջ քաշած է ամէնէն դորձկարենայ մեր հայրենիքէն հեռու վանել նաեւ ծանր ճարտարարուեստի ասպականիչ ազդեցութիւնը:

դ) Հակառակ այն փաստին, որ Աղանբեկեան լաւ չի գիտեր հայերէնը, ան կը մնայ ազդային դէմք մը՝ սորտալարը միշտ կասուած իր ժողովուրդին:

ե) Հակառակ միջազգային իր համբաւին եւ ժամանակի դեր-սղութեան, Աղանբեկեան առի՛թ

կը փնտռէ իր ազգակիցներուն հանդիպելու արտասահմանեան իր այցելութիւններուն ընթացքին, եւ զանոնք ոգեւորելու:

զ) Մեր ժողովուրդին համար կարեւորագոյն հարցերէն մէկը հանդիսացող Ղարաբաղի խնդրին համար Աղանբեկեան յառաջ քաշած է ամէնէն դորձկարենայ տեսութիւն - լուծումը հայաստանասպատկան այդ շրջանը նկատելով տնտեսական միաւոր մը՝ որուն ներկան թէ ասպազան անքակտելիօրէն կասուած է Խ. Հայաստանին: Եւ, հետեւաբար, այդ շրջանը սկիզբ է վերամիաւորուի մայր հանրապետութեան:

Այս բոլոր տուեալները մեզի կուտան իրաւունքը զինք 1987ի ՏԱՐՈՒԱՆ ՀԱՅԸ հոշակելու: